9(47:925)

Ա. Ր Ա. Ր Ա Տ

ԹԻՒ Ա.—ԵՐՋԱՆ ԺԴ. 1881 ՏԱՐԻ ԺԳ. ՅՈՒՆՎԱՐ 31.

ՆՈՐ ՏԱՐԻ.

Արարատը՝ իւր ԺԴ. շրջանը ողջունելով՝ պարտք է համարում Հայ մարդ, նախ քան «Նոր Դարէ» շնորհաւորելը զբաղեցնել քեզ մի համեստ եւ հոգեշահ համառօտ խորհրդածութիւնով։

Ահա անցաւ 1880 թուականը եւ յաջորդեց նորան 81ը. եւ ամեն մարդիկ ծիծաղագէմ շտապում են շնորհաւորել միմեանց նոր տարւայ գալուստը, ինչպէս անում են նաւորդները բաղմավտանգ եւ ալեծուփ ճանապարհորդութիւնից յետոյ ցանկալի նաւահանգիստը հասած ժամանակ։ Իսկ ես, Հայ մարդ, քեզ խորհուրդ կտամ նախ եւ առաջ կանգ առնել միանգամ, լարել ուշադրութիւնդ, բանալ քո խղճմտանքի առաջ մշողութեանդ մատեանը, գննել անխնայ, գննել առանց անհնարութեան, ինքդ քեզանից հաշիւ ու համար պահանջել անաչառապէս. եթէ քո անցեալ տարւայ մէջ գործած գործերդ արդարութեան ու ճշմարտութեան սուրբ օրէնքներին համաձայն կգտնես, եթէ քո առ Աստուած, առ ընկերս և առ անձդ ունեցած պարտականութիւններդ ամենայն ճշտութեամբ լցուցած կգտնես, եւ վերջապէս եթէ քո արդարգործունէութեամբդ թէ բարոյական եւ թէ մարմնական կեդ անցեալ տարւանից կարող եղել ես ստանալ, այո՛ եւ է ահա շնորհաւորում եմ քեզ «Նոր Դա-

ՀԱՅԿ-ՍՍՌ
Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
5760-54

ել», ուրախացիր. իսկ եթէ ընդհակառակն՝ յիշեալ պայմանները կատարած չես գանիլ քո կողմից, լաւ է որ ապարդիւն անցուցած ունայն օրերիդ տխուր պատկերը հայելու նման առաջդ դնես, արած սխալմունքներդ կրկին եւ կրկին նկատես, ցաւիս ու զղջաս, զղջաս եւ անդրդուելի հաստատակամութեամբ ուխտես գոնէ այս ներկայ տարւայ մէջ եւս ինքդ քեզ չմոռանալ, պարտազանց եւ օրինազանց չգանուիլ, նոյն սխալմունքներդ չկրկնել, ունայն, անգործ եւ ապարդիւն չանցուցանել կեանքիդ ամենաթանգագին օրերը անմիտ ճոռան պէս անաշխատ ապագայի յուսով ապրելով։

Հասկացիր, որ ժամանակը ապաքոյչ անսահման յաւիտենականութիւնից անընդհատ հոսանքով գլորվում անցնում է մեր վերայով եւ անհետանում անչեալ յաւիտենականութեան անհուն անդունդի մէջ. իսկ մեզանից ամեն մինիս այդչափ անսահման յաւիտենականութիւնների ովկիանոսից մի քանի կաթիլներ միայն սեպհական բաժին սահմանուած են Աստուածային Տեսչութիւնից եւ այն մեր կենդանութեան կարճատեւ ժամանակամիջոցն է. մենք մեր թէ ներկայ եւ թէ ապագայ կեանքի բարոյական եւ նիւթական պաշարը, երջանկութիւնը այս կարճատեւ ժամանակամիջոցում միայն կարող ենք ձեռք բերել. այո՛ մեր կեանքի միմեանց ետեւից եկող անցնող տարիները ժամանակի անհունութեան վերաբերութեամբ մի քանի աննշան կաթիլներ են, բայց մեր կենդանութեան կարճատեւութեան վերաբերութեամբ՝ դոքա մեր կեանքի նշանաւոր չափերն են կազմում. ամեն մի օրւայ անցնելու հետ ընկնում է եւ մի քար մեր կեանքի շինուածքից. մեր կեանքի ամեն մի վայրկեանը ամենամեծ նշանակութիւն ունի մեր ապագայ յաւիտենական կեանքի համար, եւ նորա ապարդիւն անցուցանելը անփոխարինելի կորուստ է մեր կողմից. Էրկայ ամեն մի վայրկեանը բովանդակում է իւր մէջ մեր ապագայ յաւիտենական մահը եւ կեանքը, երջանկութիւնը եւ թշուառութիւնը. մարդոյս կեանքի եւ մահու ահարկու պատերազմը մի ինչպէս վայրկենի վարագուրի տակ է վախճան ստանում։

Ուրեմն, Հայ մարդ, եթէ կամենուս օգուտիլ քո կեանքից, քո անկապտելի եւ ապահով սեպհականութիւնը Էրկայ վայր-

կեանք է, գործէ դորա մէջ, սերմանէ դորա մէջ, դորա մէջ եւս հաստատէ քո եւ գերդաստանիդ ապագայի հիմքը. անցեալը անդարձ է. ապագայն անյայտ. որչափ անհնար է անցեալից մի վայրկեան վերադարձնելը, նոյնչափ եւս անմտութիւն է ապագայի ամենամօտաւոր վայրկենումն անգամ ապրելու յոյս ունենալը։

Իսկ քեզ, սիրելի Հայ Ազգ, Արարատը ոչ միայն 1881 թուականի «Նոր տարին» է շնորհաւորում, այլ ամենաջերմ փափագանօք ցանկանում է քեզ այն օրը, որը քո բարոյական եւ մարմնական վերանորոգութեան գարագլուխը պէտք է կազմէ. փափագում է այժմէն իսկ տեսնել քեզ այն արգիւնաւոր, խելացի եւ ազնիւ հասարակական—Հայկական գործունէութեան մէջ, որը տարիներով կարող է փութացուցանել այդ ցանկալի օրւայ գալուստը։ Սիրելի Հայ Ազգ, քեզ մանաւանդ անհրաժեշտ է «ֆոքյ-էլ անյէալէց, օֆտ-էլ ներկայէց, Ե ըոտ այնմ ֆէղ ապագայ դնօրէնել»։ Յետ դարձիր միանգամ, դիտէ քո անցեալը. նա տխուր է. այնտեղ մնաւոր խաւարը նսեմացրել է մարմնական ուժիդ փայլը. այնտեղ ագիտութեան ժանգը կերել, մաշել է քո հայրերի եւ պապերի կեանքը. այնտեղ ատելութիւնն ու նախանձը համարիւն ազգայիններիդ մէջ կործանիչ երկպառակութիւններով արիւնահեղ պատերազմներ է յարուցել. այն ամենը լաւ դիտէ, պատճառները եւ հետեւանքները ուշի ուշով քննէ, եւ ապա՝ եթէ արդարեւ իրականապէս եւ ոչ լոկ խօսքերով ցանկութիւն ունիս զօրանալ բարոյապէս եւ նիւթապէս, եթէ փափագ ունիս լուսաւորեալ գարուս համապատասխան ազգերի շարքում դու եւս պատուաւոր տեղ ունենալ եւ բառի բուն նշանակութեամբ Ազգ անուանուիլ եւ ազգութեան իրաւունքներ վայելել, օգտուիր ներկայ ժամանակիս ողջամիտ եւ բարեյոյս ամեն հանգամանքներից. թօթափէ անտարբերութեանդ մահանման քունը, սթափէ, գործէ անդադար խոհեմ եւ խելացի ճանապարհներով. գործէ առանց մի ժամ կորցնելու, գործէ քո ներկայ եւ ապագայ սերնդոյ մէջ լոյս եւ գիտութիւն տարածելու համար, որով հաստատուն վիմի վերայ ամրացրած կլինիս քո Ազգութեան երջանիկ ու ցանկալի ապագայի հիմքը։

Ս. Վ.

39984